

1. Տերմիններ և սահմանումներ

- 1.1. Օպերատոր՝ «Տելեկոմ Արմենիա» :
- 1.2. Բաժանորդ («Beeline Բաժանորդ») – ֆիզիկական անձ, որը կնքել է «Beeline» բջջային կապի ծառայությունների տրամադրման պայմանագիր (այսուհետ՝ «Բաժանորդային պայմանագիր»): Բաժանորդը միանշանակորեն նույնականացվում է ըստ բաժանորդային համարի:
- 1.3. Հավելված՝ «My Beeline Armenia» բջջային հավելված, որը ներբեռնվում է բաժանորդի սարքի մեջ և թույլ է տալիս Բաժանորդին կառավարել Օպերատորի ծառայությունները:
- 1.4. Օպերատորի Վեբ-կայք՝ <http://www.beeline.am>:

2. Ընդհանուր դրույթներ

- 2.1. Սույն Պայմանների համաձայն, այն Բաժանորդներին, որոնք Օպերատորի հետ Բաժանորդային պայմանագիր են կնքել և ներբեռնել են Հավելվածն իրենց սարքի մեջ, Օպերատորն առաջարկում է ընդունել «My Beeline Armenia» Հավելվածի տրամադրման սույն Պայմանները (այսուհետ՝ Պայմաններ):
- 2.2. Հավելվածի առաջին գործարկումից առաջ Բաժանորդը պետք է ծանոթանա և համաձայնվի Հավելվածի հետ աշխատելու վերաբերյալ սույն Պայմաններին:
- 2.3. Գործարկելով Հավելվածը՝ համարվում է, որ Բաժանորդը ընդունել է սույն Պայմանները և պարտավորվում է լիովին կատարել դրանք:

3. Օգտագործման պայմանները:

- Վճարում 3.1. Սույն Հավելվածը, այն դեպքում եթե այն ներբեռնված է և գործարկված, թույլ է տալիս Բաժանորդին՝
- 3.1.1. Միացնել/անջատել և օգտագործել Օպերատորի ծառայությունները:
 - 3.1.2. Հավելվածից միացված Օպերատորի ծառայությունների դիմաց Բաժանորդը վճարելու է սեփական համարի հաշվեկշռից:
 - 3.1.3 Ստանալ զանգերի վերծանումը ինչպես հավելվածում, մինի-վերծանում, այնպես էլ էլեկտրոնային փոստի միջոցով՝ ուղարկելով Բաժանորդի կողմից նշված հասցեով: Օպերատորը պատասխանատվություն չի կրում բաժանորդի կողմից տրամադրված էլ. փոստի հասցեի ճշգրտության համար: Բաժանորդը կրում է բոլոր ռիսկերը կապված բաժանորդի հեռախոսահամարի վերծանված տեղեկությունների ստացման, պահպանման, պաշտպանության համար՝ ուղարկված բաժանորդի էլեկտրոնային փոստին:
- 3.2. Սույն Պայմանների 3.1. կետում նշված ծառայություններից օգտվելու պայմանները, դրանց տարիֆիկացման արժեքն ու պայմանները նշվում են Օպերատորի Կայքում: Պատվիրելով տվյալ ծառայությունները՝ համարվում է, որ Բաժանորդը ծանոթացել և համաձայնվել է դրանց օգտագործման պայմաններին, դրանց տարիֆիկացման արժեքին և կարգին:
- 3.3. Բաժանորդը պարտավորվում է իր վրա վերցնել ողջ պատասխանատվությունը բոլոր դիմումների և գործողությունների համար՝ ձեռնարկված նրա կողմից

Հավելվածի միջոցով, որոնք տեղի են ունեցել Հավելվածի գործարկումից հետո:

3.4. «My Beeline Armenia» հավելվածի GPRS տրաֆիկը Beeline կանխավճարային հաշվարկային համակարգի բաժանորդների համար չի տարիֆիկացվում:

3.5. Բաժանորդն իրավունք ունի հրաժարվել Հավելվածն օգտագործելուց այն եղանակներով, որոնք նախատեսված են դրա անջատման համար:

3.6. Օպերատորն իրավունք ունի որոշելու Հավելվածի ծառայությունների կազմը, դրա կառուցվածքը և արտաքին տեսքը, ինչպես նաև փոփոխություններ կատարել Հավելվածում՝ նոր արտադրանքներ և ծառայություններ ներդնելու շնորհիվ, տրամադրել հասանելիություն նոր ծառայություններին, առանց Բաժանորդի նախնական ծանուցման:

3.7. Օպերատորը իրավունք ունի տեղեկացնել բաժանորդին իր էլեկտրոնային փոստի միջոցով նոր սակագնային պլանների, խթանումների, եւ այլնի մասին: Բաժանորդը կարող է բաժանորդագրվել/հրաժարվել օպերատորների կողմից ուղարկված ծանուցումներից՝ կատարելով համապատասխան փոփոխություններ հավելվածի պայմաններում:

3.8. Բաժանորդը սույնով տալիս է իր համաձայնությունը Օպերատորին Բաժանորդի կողմից տրամադրված էլեկտրոնային հասցեին տարբեր նախաձեռնությունների մասին տեղեկատվություններ ուղարկելու համար: Միաժամանակ Բաժանորդն իրավունք ունի ցանկացած ժամանակ հրաժարվելու իր էլեկտրոնային հասցեին հաղորդագրությունների ստանալուց՝ դիմելով օպերատորին:

4. Սահմանափակումներ և պատասխանատվություն

4.1. Հավելվածը չի տրամադրվում USB-մոդեմների վրա այն օգտագործելու համար:

4.2. Բաժանորդը պարտավորվում է չօգտագործել Հավելվածն այնպիսի գործողություններ կատարելու համար, որոնք հակասում են Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությանը:

4.3. Բաժանորդը պարտավորվում է այնպիսի միջոցներ ձեռնարկել իր սարքավորումը կարգաբերելու համար, որը կբացառի Հավելվածի անբարեխիղճ օգտագործումը երրորդ անձանց կողմից, ինչպես նաև, օպերատիվ կերպով արձագանքել նման օգտագործման դեպքերը բացահայտելիս:

4.4. Օպերատորը պատասխանատվություն չի կրում և չի հատուցում այն վնասները, որոնք առաջացել են երրորդ անձանց կողմից Հավելվածի առանց թույլտվության օգտագործման պատճառով:

4.5. Բաժանորդը պատասխանատվություն է կրում երրորդ անձանց գործողությունների համար, որոնք օգտագործում են բաժանորդային համարը Հավելվածից օգտվելու համար:

4.6. Ոչ մի դեպքում Օպերատորը պատասխանատվություն չի կրում ուղղակի կամ անուղղակի վնասի համար, որը պատճառվել է Բաժանորդին Հավելվածի օգտագործման կամ օգտագործման անհնարինության հետևանքով և կրած սխալների, բացթողումների, աշխատանքում ընդմիջումների, գործառույթների փոփոխման, խտանների, աշխատանքում ձգձգումների արդյունքում, որոնք տեղի են ունեցել ոչ Օպերատորի մեղքով:

4.7. Հավելվածի գործառույթները ամբողջապես հասանելի են Բաժանորդին միայն Բաժանորդի մոտ ինտերնետ ցանցին մուտքի առկայության դեպքում՝

5. Այլ պայմաններ

5.1. Բաժանորդի կողմից այն գործողությունները, որոնք պայմանվորում են սույն Պայմանագրով Հավելվածի օգտագործումը, դիտարկվում է իբրև սույն Պայմանագրի և դրանց մեջ պարունակվող սահմանափակումների հետ Բաժանորդի միանգամայն և անվերապահ համաձայնություն:

5.2. Մնացած այլ դեպքերում, որոնք ուղղակիորեն նախատեսված չեն սույն Կանոններով, Բաժանորդն ու Օպերատորն առաջնորդվում են Բաժանորդային պայմանագրով: